ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐԲԱԹԻ ՀՈՎԻԿ ԶԱՔԱՐՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ՄԻՋՆ. ԴՊՐՈՑ
Գյուղ Արբաթ, 4-րդ փողոց, 48 շենք
հեռ. 098472420
էլ. փոստ.՝ arbat@schools.am

REPUBLIC OF ARMENIA
REGION ARARAT
ARBAT SECONDARY SCHOOL
AFTER HOVIK ZAKARYAN
SNCO

**06.10.2021թ.**

**հ** 98

ՀՀ Արարատի մարզպետ

պարոն Ռ. Թևոսյան

Հարգարժա՛ն պարոն մարզպետ.

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ «ՀՀ Արարատի մարզի Արբաթի Հովիկ Զաքարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ – ում առաջացել է քիմիա (9 դասաժամ), կենսաբանություն (10 դասաժամ) , ֆիզկուլտուրա (9 դասաժամ ), ինֆորմատիկա ( 8 դասաժամ) , տեխնոլոգիա (6 դասաժամ) և ռուսաց լեզու (16 դասաժամ ) առարկաների ուսուցչի թափուր տեղեր , որի համար հայտարարվել է մրցույթ:

Մրցույթը տեղի կունենա 2021 թ. հոկտեմբերի 21-ին, ժամը 14:00-ին:

Կից ներկայացվում է Կրթություն շաբաթաթերթում տրված հայտարարությունը:

Արդիր ՝ 1 էջ:

Դպրոցի տնօրեն՝ / Գ. Վահանյան /

Կ. Տ.

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արարատի մարզի ,, Արբաթի Հովիկ Զաքարյանի անվան միջն. դպրոց.. ՊՈԱԿ-ի քիմիայի (9 դասաժամ),

կենսաբանության (10 դասաժամ) , ֆիզկուլտուրայի (9 դասաժամ ), ինֆորմատիկայի ( 8 դասաժամ) , տեխնոլոգիայի (6 դասաժամ) և ռուսաց լեզվի (16 դասաժամ ) ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով ՝ թեստավորման և հարցազրույցի : Թեստավորման փուլն անցկացվում ՝ է ըստ ՀՀ ԿԳՍՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել ՝

- դիմում / Ձև 1/ , մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/ դիպլոմ/
- անձը հաստատող փաստաթուղթ
- .. Հանրակրթության մասին .. ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը / առկայության դեպքում /,
- ինքնակենսագրություն / Ձև 5 /,
- այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ -ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր / առկայության դեպքում/
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ :

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջությամբ չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 6-ից մինչև հոկտեմբերի 19-ը ներառյալ , ամեն օր ՝ ժամը 10:00-ից 14:00-ը , բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 21-ին ՝ ժամը 14:00-ին , ՀՀ Արարատի մարզի Արբաթի Հովիկ Զաքարյանի անվան միջն. դպրոցում. հասցեն ՝ Արարատի մարզ , գ. Արբաթ , փ.4, շ.48:

Տեղեկությունների համար զանգահարել ՝ 098 47 24 20 հեռախոսահամարով: